“Հաստատում եմ” [1)]
աշխատակազմի ղեկավար Ա.Վարդանյան
(պատվիրատուի ղեկավարի անունը ազգանունը)

_____
(ստորագրություն)

“18” մայիսի 2011 թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

1. Պատվիրատուի անվանումը ՀՀ Արարատի մարզպետարան

2. Պայմանագրի (կցվում է) կնքման ամսաթիվը 18.05.2011թ.

3. Պայմանագրի ծածկագիրը՝ **ՀՀԱՄ- ԲԸԱՀ-ԱՇՁԲ 11/26**

4. Պայմանագրի գումարը՝ 52609700 /հիսուներկու միլիոն վեց հարյուր ինը հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

5. Պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում կանխավճարի չափը 20 տոկոս 10521940 ՀՀ դրամ

6. Պայմանագրի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից

6.1 Պայմանագիրը պետական բյուջեից ֆինանսավորվելու դեպքում՝

Բաժին **11** Խումբ **01** Դաս **01** Ծրագիր **01**

7. Պատվիրատուին սպասարկող գանձապետարանի ստորաբաժանման կոդը 90041

8. Գնման ձևը (ընթացակարգ) Բանակցային ընթացակարգ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու

9. Պայմանագրի կատարման վերջնաժամկետը 30.08.2001թ.

10. Պայմանագիր կնքած անձի՝

10.1 անվանումը՝ **<<Պարտեզ ԱԽԱ-Էլիտ>> ՍՊԸ**

10.2 հարկ վճարողի հաշվարկային հաշիվը (ՀՎՀՀ) 04218568

10.3 բանկային հաշիվը ՀՀ 163098179902

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

/հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն/

2011 թվականի մայիսի 18-ին ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ /հասցե՝ ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60/ և <<Պարտեզ ԱԽԱ-Էլիտ>> ՍՊԸ /հասցե՝ ք.Արտաշատ, Մյասնիկայն 117ա/ միջև կնքվել աշխատանքների ձեռք բերման գնման պայմանագիր:

1. Գնման պայմանագրի կնքման ամսաթիվը, համարը, գինը, կատարման վերջնաժամկետը.

<<Պարտեզ ԱԽԱ-Էլիտ>> ՍՊԸ

Գնման պայմանագրի կնքման ամսաթիվը 18.05.2011թ.

Համարը՝ **ՀՀԱՄ- ԲԸԱՀ-ԱՇՁԲ 11/26**

Գինը՝ 52609700 /հիսուներկու միլիոն վեց հարյուր ինը հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

Վերջնաժամկետը 30.08.2011թ.

1 Գնման առարկայի անվանումը

Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել գ.Քաղցրաշենի դպրոցի մետաղապլաստե պատուհանների տեղադրման, գԱյնթապի թիվ 2 դպրոցի մետաղապլաստե պատուհանների տեղադրման, գ.Այգեստանի մշակույթի տան մետաղապլաստե պատուհանների տեղադրման և մասնակի վերանորոգման աշխատանքներ

2 Բանկային և հարկային վճարողի հաշվարկային հաշիվները

<<Պարտեզ ԱԽԱ-Էլիտ>> ՍՊԸ /<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Արտաշատի մ/ճ ՀՀ 163098179902, ՀՎՀՀ 04218568

4. Կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը

Գնման ընթացակարգը

Բանակցային ընթացակարգը առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

Պայմանագիրը կնքվել է Բանակցային ընթացակարգով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 340-Ն որոշման 3-րդ կետը:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 11/26

ք. Արտաշատ «18» Մայիսի 2011թ.

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Վարդանյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << Պարտեզ ԱԽԱ-Էլիտ>>ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Զաքարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել գ.Քաղցրաշենի դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրման, գ.Այնթապի թիվ 2 դպրոցի մետաղապլաստե պատուհանների տեղադրման, գ. Այգեստանի մշակույթի տան մետաղապլաստե պատուհանների տեղադրման և մասնակի վերանորոգման աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանվում՝ 30.09.2011 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 3 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 52609700 (հիսուներկու միլիոն վեց հարյուր ինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, որից 8768260 (ութ միլիոն յոթ հարյուր վացունութ հազար երկու հարյուր վացուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնի՝ 20 տոկոսը 10521940 (տաս միլիոն հինգ հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված աշխատանքների ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում

նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2011թ., պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսնված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Արարատի մարզպետարան	**Կապալառու**
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60	<<Պարտեզ ԱԽԱ Էլիտ >> ՍՊԸ
ՀՀ 900411099188	ք.Արտաշատ,Մյասնիկյան 117 ա
Արտաշատի ՏԳԲ	հ/հ 16309 8179902
ՀՎՀՀ 04204668	<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Ա. Վարդանյան	Արտաշատ մասնաճյուղ
Պատվիրատու	ՀՎՀՀ04218568
(ստորագրություն)	Ա.Զաքարյան
Կ.Տ	(ստորագրություն)
	Կ.Տ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

			Սկիզբը	Ավարտը
1	գ.Քաղցրաշենի դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրում	21 433 500	Պայմանագրի կնքման օրը	30.09.2011թ.
2	գ.Այնթապի թիվ 2 դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրում	20 457 700	Պայմանագրի կնքման օրը	30.09.2011թ.
3	գ.Այգեստանի մշակույթի տան մետաղապլաստե պատուհանների տեղադրում և մասնակի վերանորոգում	10 718 500	Պայմանագրի կնքման օրը	30.09.2011թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		52 609 700		

Պատվիրատու
Արարատի մարզպետարան
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
Հ/Հ 900411099188
Արտաշատի ՏԳԲ
ՀՎՀՀ 04204668

Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու

<<Պարտեզ ԱԽԱ Էլիտ >> ՍՊԸ
ք.Արտաշատ,Մյասնիկյան 117 ա
հ/հ 16309 8179902
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Արտաշատ մասնաճյուղ
ՀՎՀՀ04218568

Ս.Զաքարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզի գ. Քաղցրաշենի դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրում

Ծավալաթերթ

հ/հ	աշխատանքների և ծախսերի անվանումը	չափի միավոր	քանակը	գինը	գումարը
1	2	3	4	5	6
	1. Քանդման աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող փայտե դռների քանդում	100 մ^2	0.1334	150	20.01
2	Գոյություն ունեցող փայտե պատուհանների և պատուհանագոգերի քանդում	100 մ^2	4	160	640
3	Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում	100 մ^2	0.81	30	24.3
4	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տ	4.4	5	22
5	Շին.աղբի բարձում ինքնաթ. էքսկավատոր	1000 մ^3	0.002	5000	10
6	Տեղափոխում 5կմ	տ	4.36	4	17.44
	2.Պատեր, միջոցներ				
1	Պատուհանատակ հատվածի երեսապատում հղկված 40-մմ տուֆե սալերով	100 մ^2	0.17	1700	289
2	Թիկունքային մասի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարից	մ^3	5.1	37	188.7
3	Պատուհանատակ հատվածի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարից	մ^3	13.4	37	495.8
	3. Բացվածքներ				
1	Ալյումինե դռների տեղադրում /առանց ջերմակամուրջ, ապակեփաթեթով, թուրքական 46մմ/	մ^2	8.99	42	377.58
2	Մետաղապլաստե դռների տեղադրում, 4+4 ապակեփաթեթով,60մմ սպիտակ թուրքական պրոֆիլ	մ^2	4.35	37	160.95
3	Պատուհանագոգերի հարթեցում ց/ավազե շաղախով 3սմ	100 մ^2	0.76	200	152
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ սպիտակ	մ^2	135.28	32	4328.96
5	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /չբացվող/ սպիտակ	մ^2	227.5	28	6370
6	Պլաստմասե պատուհանագոգի տեղադրում /50սմ լայնությամբ/	գծմ	200.5	6.5	1303.25
7	Պատուհանագոգի խցան	զույգ	115	0.3	34.5
8	Պատուհանագոգի արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղից 0,6մմ	100 մ^2	0.48	1000	480
	4. Հարդարման աշխատանքներ		3.75		
1	Մինչև 20 սմ հաստությամբ հարթ արտաքին շեպերի սվաղ ց/ավազե շաղախով	100 գմ	3.75	90	337.5
2	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0.44	150	66
3	Թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ^2	2.48	200	496
4	Պատերի և թեքությունների ներկում լատեքսային ներկով	100 մ^2	2.92	100	292
5	Սվաղի անկյունակ	գծմ	657.4	0.2	131.48
	Ընդամենը				16237.47
	Շահույթ 10%				1623.747
	Ընդամենը				17861.217
	ԱԱՀ 20%				3572.2434
	Ընդամենը				**21433.5**

Պատվիրատու
Արարատի մարզպետարան
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
Հ/Հ 900411099188
Արտաշատի ՏԳԲ
ՀՎՀՀ 04204668

Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Պարտեզ ԱԽԱ Էլիտ >> ՍՊԸ
ք.Արտաշատ,Մյասնիկյան 117 ա
հ/հ 16309 8179902
<<Հայէկոնտրոլ>>ԲԲԸ
Արտաշատ մասնաճյուղ
ՀՎՀՀ04218568

Ա.Զաքարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզի գ. Այնթապի թիվ2 դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրում

Ծավալաթերթ

հ/հ	աշխատանքների և ծախսերի անվանումը	չափի միավո	քանակը	գինը	գումարը
1	2	3	4	5	6
	1.Պատեր, միջոցներ				
1	Պատուհանատակ հատվածի երեսապատում հղկված 40-մմ տուֆե սալերով	100 մ^2	0.44	1700.00	748.00
2	Պատուհանատակ հատվածի կառուցում 10 սմ պեմզաբլոկով	մ^3	4.35	35.10	152.69
3	Պատերի ամրանավորում Ա-1	տ	0.05	500.00	25.00
4	Պատուհանատակ հատվածի բետոնացում Բ-12,5 դասի բետոնով	մ^3	3.06	30.00	91.80
	2. Բացվածքներ				
1	Մետաղապլաստե դռների տեղադրում	մ^2	3.78	37.00	139.86
2	Պատուհանագոգերի հարթեցում ց/ավազե շաղախով 3սմ	100 մ^2	0.33	200.00	66.00
3	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ սպիտակ	մ^2	150.80	32.00	4825.60
4	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /չբացվող/ սպիտակ	մ^2	252.72	28.00	7076.16
5	Պլաստմասե պատուհանագոգի տեղադրում /20սմ լայնությամբ/	գմ	252.30	2.50	630.75
6	Պատուհանագոգի խցան	զույգ	174.00	0.30	52.20
7	Պատուհանագոգի արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղից 0,6մմ	100 մ^2	0.63	1000.00	630.00
	3. Հարդարման աշխատանքներ				
1	Մինչև 20 սմ հաստությամբ հարթ արտաքին շեպերի սվաղ ց/ավազե շաղախով	100 գմ	1.41	90.00	126.90
2	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0.73	150.00	109.50
3	Պատուհանների թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ^2	1.27	200.00	254.00
4	Պատերի և պատուհանների թեքությունների ներկում լատեքսային ներկով	100 մ^2	2.00	100.00	200.00
5	Սվաղի անկյունակ	գմ	868.20	0.20	173.64
	4. Քանդման աշխատանքներ				
1	Շին.աղբի հավաքում և դուրս բերում տարածքից	տ	32.40	3.00	97.20
2	Շին.աղբի բարձում ինքնաթ. էքսկավատոր	1000 մ^3	0.02	2800.00	50.40
3	Տեղափոխում 5կմ	տ	32.40	1.50	48.60
	Ընդամենը				15498.30
	Շահույթ 10%				1549.83
	Ընդամենը				17048.12
	ԱԱՀ 20%				3409.62
	Ընդամենը				**20457.7**

Պատվիրատու
Արարատի մարզպետարան
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
Հ/Հ 900411099188
Արտաշատի ՏԳԲ
ՀՎՀՀ 04204668

Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Պարտեզ ԱԽԱ Էլիտ >> ՍՊԸ
ք.Արտաշատ,Մյասնիկյան 117 ա
հ/հ 16309 8179902
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Արտաշատ մասնաճյուղ
ՀՎՀՀ04218568

Ա.Զաքարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզի գ. Այգեստանի մշակույթի տան մետաղապլաստե պատուհանների

տեղադրում և մասնակի վերանորոգում

Ծավալաթերթ

հ/հ	աշխատանքների և ծախսերի անվանումը	չափի միավոր	քանակը	գինը	գումարը
1	2	3	4	5	6
	1. Քանդման աշխատանքներ				
1	Փայտե պատուհանների ապամոնտաժում 3,0x1,4մ (2 հատ)	$մ^2$	8.4	2	16.8
2	Նույնը, 3,0x1,5 մ (4 հատ)	$մ^2$	18.0	2	36
3	Նույնը, 3,0x1,3 մ (2 հատ)	$մ^2$	7.8	2	15.6
4	Նույնը, 1,8x1,4 մ (1 հատ)	$մ^2$	2.52	2	5.04
5	Նույնը, 2,4x1,9 մ (1 հատ)	$մ^2$	4.56	2	9.12
6	Փայտե դռների ապամոնտաժում 2,7x 1,4 մ (1 հատ)	$մ^2$	3.78	1.5	5.67
7	Նույնը 2,7x1,9մ (1 հատ)	$մ^2$	5.13	1.5	7.695
8	Հատակի բետոնե նախաշերտի քանդում H=10սմ	$մ^3$	22.1	12.5	276.25
9	Գրունտի քանդում ձեռքով	$մ^3$	85.2	4	340.8
10	Ավելորդ գրունտի ձեռքով բարձում էքսկավատորով ա/ինք. վրա	$մ^3$	85.2	1	85.2
11	Շին աղբի և գրունտի ձեռքով բարձում և տեղափոխում 5 կմ	տ	171.0	0.5	85.5
	2. Մետաղապլաստե պատուհաններ				
1	Մետաղապլաստե պատուհանների բլոկ 60մմ հաստության, սպիտակ թուրքական պրոֆիլներից, 4+4մմ ապակեփաթեթով, ներառյալ սարքերը Պ-1 (0,75x1,3)մ-1 հատ բացվող-0,49	$մ^2$	0.98	32	31.36
2	Նույնը, Պ-2 (0,75x1,3)մ-4 հատ բացվող-2,25 չբացվող-2,25	$մ^2$	4.5	32	144
3	Նույնը, Պ-3 (0,75x1,3)մ-2 հատ բացվող-1,05 չբացվող-1,05	$մ^2$	2.1	32	67.2
4	Նույնը, Պ-4 (3,0x1,4)մ-2 հատ չբացվող	$մ^2$	8.4	28	235.2
5	Նույնը, Պ-5 (3,0x1,5)մ-4 հատ չբացվող	$մ^2$	18.0	28	504
6	Նույնը, Պ-6(3,0x1,3)մ-2 հատ չբացվող	$մ^2$	7.8	28	218.4
7	Նույնը, Պ-7(1,8x1,4)մ-1 հատ չբացվող	$մ^2$	2.52	28	70.56
8	Նույնը, Պ-8(2,4x1,9)մ-1 հատ չբացվող	$մ^2$	4.56	28	127.68
	3. Մետաղապլաստե դռներ				
1	Մետաղապլաստե սպիտակ գույնի, արտաքին դուռ ապակեպատ խուլ վերանափեղկով Դ-1 (2,7x1,4)մ-1 հատ խուլ դուռ-2,94 վերնափեղկով-0,84	$մ^2$	3.78	37	139.86
2	Նույնը,Դ-2 (2,7x1,3)մ-1 հատ խուլ դուռ-2,73 վերնափեղկով-0,78	$մ^2$	3.51	37	129.87
3	Մետաղապլաստե սպիտակ գույնի արտաքին խուլ դուռ Դ-3 (2,7x1,9)մ 1-հատ	$մ^2$	5.1	35	178.5
	4. Հատակ / դահլիճ /				
1	Բետոնե նախաշերտ H= 100մմ B 12,5 /100/ դասի	$մ^3$	26.8	30	804
2	Գրունտի տոփանում խճով	$մ^2$	268.0	3.5	938
3	Խճի նախաշերտ H=100մմ	$մ^3$	26.8	20	536
4	Ցեմենտավազե հարթաշերտ H=30մմ	$մ^2$	268.0	2	536
5	Հատակի երեսապատում կերամոգրանիտե սալերով ցեմենտեհիմքով սոսնձանյութով	$մ^2$	268.0	8.3	2224.4
6	Շրիչակներ կերամոգրանիտե սալերով L=74գծմ	$մ^2$	7.4	13	96.2

	5. Հարդարման աշխատանքներ				
1	Շեպերի սվաղում գաջե շաղախով L=170գծմ b=0,2մ	մ^2	34	5.8	197.2
2	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	մ^2	23.2	2.5	58

Ընդամենը	8120.105
Շահույթ 10%	812.0105
Ընդամենը	8932.1155
ԱԱՀ 20%	1786.4231
Ընդամենը	**10718.5**

Պատվիրատու
Արարատի մարզպետարան
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
Հ/Հ 900411099188
Արտաշատի ՏԳԲ
ՀՎՀՀ 04204668

Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Պարտեզ ԱԽԱ Էլիտ >> ՍՊԸ
ք.Արտաշատ,Մյասնիկյան 117 ա
h/h 16309 8179902
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Արտաշատ մասնաճյուղ
ՀՎՀՀ04218566

Ա.Զաքարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<<18>> Դեկտեմբեր 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱՀ- ԱՇՁԲ- 11/26 գնման պայմանագրի

Կապալառու

_____
_____

_____
հասցե_____
հհ_____

_____
հվհհ_____

Պատվիրատու

_____
_____

_____
հասցե_____
հհ_____

_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>>_____ 2011թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>>_____ 2011թ.
Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ _____ ի դեմս
և կապալառուն՝ _____ ի դեմս
, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<____>>_____ 2011թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և օրացուցային գրաֆիկին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն <<_____>><<_____>> 2011թ–ից <<_____>> <<_____>> 2011թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	_____	_____		_____

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ Տ

Աշխատանքը ընդունեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ Տ

Հավելված N 3

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար դրամ

N ը/կ	Ձեռք բերվող ապրանքի աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության 2011թ. Պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ընդ որում												Ընդամենը տարի
			I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	գ. Այնթապի թիվ 2 դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրման աշխատանքներ	5113	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	20,457.700	20,457.700	20,457.700	20,457.700	20,457.700	20,457.700	20,457.700
2	գ.Քաղցրաշենի դպրոցում մետաղապլաստե պատուհանների տեղադրման աշխատանքներ	5113	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	21433.500	21433.500	21433.500	21433.500	21433.500	21433.500	21433.500
3	գ. Այգեստանի մշակույթի տան մետաղապլաստե պատուհանների տեղադրման և ներքին հարդարման աշխատանքներ	5113	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	10718.500	10718.500	10718.500	10718.500	10718.500	10718.500	10718.500
	ԸՆԴԱՄԵՆԸ		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	52609.700	52609.700	52609.700	52609.700	52609.700	52609.700	52609.700

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պատվիրատու
Արարատի մարզպետարան
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
Հ/Հ 900411099188
Արտաշատի ՏԳԲ
ՀՎՀՀ 04204668

Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<Պարտեզ ԱԽԱ Էլիտ >> ՍՊԸ
ք.Արտաշատ,Մյասնիկյան 117 ա
հ/հ 16309 8179902
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
Արտաշատ մասնաճյուղ
ՀՎՀՀ04218568

Ա.Գարեգրյան
(ստորագրություն)
Կ.Տ